

ծոթրին կը տանէին իրենց հակառակորդին՝ անոր հետ հաշտուելու համար, նշանակելու թէ կաղնիի պէս ամբարտաւան էին և ծոթրինի թփիկին պէս հեղ պիտի ըլլան. կը յուցնէ և կը բացատրէ թէ ո՞րն է Աւետարանին «վայրենի չուշան»ը որ «ո՞չ ջանայ և ո՞չ նիւթէ», մինչդեռ ոչ Սողոմոնյամենայն ի փառան իւր զգեցաւ իրբե զմի ի նոցանէ», և կը բացատրէ թէ ի՞նչպէս ան ափ հոց արկանելիո կը դառնայ չորնալէն ետք: Կը յուցնէ «Սարոնի ծաղիկը». մատնանիշ կ'ընէ այն բոյսը՝ որ թելազրած է հօթնասեղեան ջահին (candélabre) ձեր, և դեռ ուրիշ բոյսներ և ծաղիկներ՝ զործածուած Ս. Գրքի մէջ որպէս խորհրդանշաններ:

Ապա Սրբազնը առաջնորդուեցաւ Համալսարանի պաղեստինեան հնագիտութեան սեննեակը, ուր հանդիպեցաւ ու ծանօթացաւ համբաւաւոր Դոկտ. Է. Լ. Սիւկինիկի, որ յուցուց նոր պեղումներով գտնուած՝ խճանկարներով զարդարուած սինակոկի մը մասին հրատարակելի իր մէկ զործին արդէն հրատարակուած զունատիպ պատկերները, յայտնելով թէ հրէական խճանկարչութեան մասին նոր յայտնութիւններ պիտի ընէ ան, վասնզի առաջին սինակոկին է ուր խճանկարներ գտնուած են: Կը բացատրէ Պաղեստինի պատմութիւնը լուսաբանող այլեացը առարկաներ: Դոկտ. Սիւկենիկ բազմակեզուեան է. և Սրբազնին հետ ֆրանսիերէն կը խօսի: Ցաւ յայտնեց թէ այդչափ աղմուկ ելաւ անցեալները՝ երբ իր պեղած մէկ դամբարանը, ուր «Յիսուս որդի Յովսիփու» արձանագրութիւնը գտած էր, ոմանք նկատեցին Քրիստոսի նորազիւտ զերեզմանը, մինչդեռ ինք յայտնած էր թէ՝ այս առնունները սովորական անուններ ըլլալով աւետարանական ժամանակներուն՝ շատ մը Յովսիփի որդի Յիսուսներ կային բնականարար այն ատեն: Ըստ թէ շատ մը արձանագրութիւններ գտած է Աւետարանի մէջ գանուող հրէական անուններով:

Համալսարանին հնագիտուական հաւաքածուն իր միւս մասերուն նայելով փոքրէ: Բայց պէտք չէ մոռնալ թէ ո՞րքան երիտասարդ է ան տակաւին, և շատ մը բաժինները նոր հաստատուելու վրայ են: Համալսարանը բացուեցաւ ասկէ միայն 5

տարիներ առաջ, Լորո Բալֆորի կողմէ: Այսչափ կարճ ժամանակի մէջ բարդ հաստատութիւն մը զարձած է այն հրէական ձեռներէցութեան շնորհիւ: Արդէն իսկ ունի հետեւեալ ուսմանց բաժինները.

1. Ա. ԵՅԻՄԱՅԱԳԻՑՈՒԹԻՒՆ (թալմուտ, երր. գրականութիւն, պաղեստինազիտութիւն, հրէական փիլիսոփայութիւն և Կարսալահ, հրէական պատմութիւն և ընկերանութիւն, հրէական ս. գրական մեկնարանութիւն): Բ. ԱՄԵՒԵԼԵԱՆ (իմաստափրութիւն, յունարէն, յոյն և հոոմ. պատմութիւն, միջին դարու պատմութիւն): 2. ՈՒՍՈԴԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ (humanities) (իմաստափրութիւն, յունարէն, յոյն և հոոմ. պատմութիւն, միջին դարու պատմութիւն):

Համալսարանը կը ձկտի մասնաւորապէս ուժ տալ և կտարելազործել երբայագիտութիւնը և արևելեան ուսմունքը: Այսուհանգերձ զիտական ուրիշ բաժիններ ալ հետքակետէ կը հաստատուին: Փորձարկութեան և հետախուզական նպատակներով արդէն հաստատուած կան՝ բնագիտութեան, կենսաբանական և կոլոյդական տարրաբանութեան, ընդհանուր տարրաբանութեան, պաղեստինեան բնակուն գիտութեան, մակարուծաբանութեան բաժինները, իրենց ստորաբաժանումներով:

Նորին Սրբազնութիւնը երբ ելաւ հընագիտական հաւաքածուներու բաժնէն՝ արդէն կէսօրը անցած էր, ուստի հրաժեշտ տուաւ և երկու ժամուան յոյժ հետաքրքրական այցելութենէ ետք՝ մեծապէս զոհ և շնորհակալ մնալով՝ վերադարձաւ վանք:

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ ՇՈՒՐԶ

Անգեղաւուոյ Ֆեկտ. 22-ին Քաղաքի Վաեմ, Կուռավարչ Գր. Քիյը Ռոշ պատշաճական թեսութեան ուրց տեսակցութիւն մ'ունենալու համար հրավիրած է Ս. Արքոյոյ Պատր. Տեղապահ Մրգանցի ն. Արքազնութիւնը Հոգ. Տ. Կիւրեղ վաղապէտի թնկերակցութեամբ նոյն օրն իսկ զատած եւ խօսակցութիւն ունեցած էր Կոռավարչին նետ:

ԱԿՐԵՒԹ ՎՐԵՎԱԿԱ

Յաջորդ երես, ա. սիւնակ 7րդ. տող 23 Յունիս պիտի ըլլայ 19 Յունիս:

Նոյն ամսու 25-ին Տեղապահ Մրգազան Ընդհանուր ժողովը ի նիս կոչեց եւ վասեմ. Կառավարչին նետ իր ունեցած տեսակցութիւնը եւ ամու նիւրը Պատկ. Ընդհ. ժողովին հաջործեց գեկացազրկ մր.

Այս գեկացազրկին Վրայ Պատկ. Միար. Ընդհ. ժողովը նանգամանօրէն խորհրդակցելէ ետք՝ յարմար դաշտեց եւ որուեց բաւեփոխիլ 23 Յունիսին տուած իւ ոռումը Միարանական Կանոնագրի պատրիարքական թերութեան վերաբերեալ յօրուաճներու մասին (տե՛ս ԱՄՊՆ 1930, Թիւ 7-8 9 Եւեն 272), եւ բա այն ալ գրակ մը հաղործեց Տեղապահ Մրգազան Հօր:

Վասեմ. Քիյր Խոչի խնդրանին Վրայ՝ այս ուռումնադիր, ուղղուած Տեղապահ Մրգազան Հօր Ընդհ. ժողովոյ 38 անդամոց կողմէ՝ նորին Վասմուրեան մասուցուեցաւ:

Հետեւեալ պատճենն է յիւեալ գրութեան:

16 Փետրուար 1931

Համար 11.—

Դեմականիք

**Տ. Միւրով Ս. Խովիսկուպոս Նշանան
Բարեկամամ Պատրիարքական Տեղապահ
և Նախազամ Պատկ. Միարանական
Ընդհանուր ժողովոյ Ս. Յակոբիսանց
Առաքելական Արքուոց
ԵՐՈՒՍԱԼԵՄ**

Գերազնորհ Մրգազան Հայր,

Սուրբ Աթոռոյս Միարանական Ընդհանուր ժողովը իր ներկայ տարեցքչանի 25 նեկտոմերեր 1930 ժե նիստին մէջ լսելէ յետոյ Զեր Մրգազանութեան զեկոյցը զոր ըրաւ՝ Երուսալէմի վասեմ. Կառավարիչին հետ իր 1930 թեկումընը 22-ին ունեցած տեսակցութեան առթիւ, յետ խորհրդակցութեան քուէարկեց հետեւեալ որոշումները.

ԱՌԱՋԻՆ. — Հնկառելով որ Սուրբ Աթոռոյս Պատրիարքի ընտրութիւնը Ամենայն Հայոց Հայրապետին վաւերացացման ննաթարկելու պարագան նախընթաց մը չունի, այս անգամուան համար առկա իր նորում իր ներկայ տարեցքչանի 19 Յունիս 1930 նիստին մէջ այս կէտին վերաբերմամբ տըւած որոշումը, և այս խնդրին լուծումը յանձնել ընտրելի առաջայ Պատրիարքին: Հ

ԵՐԿՐՈՒԹԻ. — Հնդգրել թիւստանական Հոգատուար արզարաւէք Կառավարութիւնէն Հայոց Ազգին և Միարանութեան Պարաւոր իրաւանց պահպանումը և յառաջիկայ Պատրիարքական ընտրութեան Միարանութեան վերապահումը, հնդգանուն ցանկին վրայէն ընտրելու Պատրիարքը, արտօնութեամբ նորին Վեհափառութեան թԱՂԱԱՐ-ԿԱՑՍԵՐ, որ իրաւանք ունի ըստ նախընթացին հաստատելու և վաւերացնելու Ծնուըրեալը:

Կը խնդրենք խոնարհարար Զեր Մրգազանութեանէն հաղորդել ներկայս Երուսալէմի վասեմ. Կառավարիչին:

Ա Ն Դ Ա Մ Ք

**ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

(Առողազրութիւն)

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Երուսալէմի լինաստանի Ընդհ. Հիւպատոսութեան պաշտօնին կոչուած **Մ. Խովիսկուպի Խովիսկուպի**, 8ունիվ. 28-ին իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանն եւ Դանիլինին մէջ ընդունեցաւ Պատր. Տեղապահ Մրգազան Հօր կողմէ:

Նորին Մրգազութիւնը, 8ունիվ 31-ին, նեսն ունենալով Դիւանապետ Տիար Կ. Նորեւանը, փախազարդ այցելութիւն տուաւ լինաստանի նորբնաթիր Պ. Ընդհ. Հիւպատոսին:

● Երուսալէմի Անգլիական Զօրաց Հրամանատար Գենդալիս Պէրնար Լո Ֆոնիկուրէ, ընկերակցութեամբ բաղարիս Կառավարիչի Օղնական Սուլութի Դէյ Էլյունինի. Փետրվ. 3-ին այցելեց Պատրիարքարանն, եւ Դանիլինին մէջ ընդունուեցաւ Պատր. Տեղապահ Մրգազան Հօր կողմէ:

● Նոյն օրը Վասերս այցելեցին Պաղեստինի Հանրութեանց պաշտօնատար **Մր. Քուուէ** եւ ուրիշ պետական կարեւոր անձնաւորութիւններ, որոնք առաջնորդուեցան Ս. Յակոբայ Տաճարը, ուրցոյց արուեցան իրենց եկեղեցական նուութիւններ:

● Քաղաքիս Արքարական Պատրիարքին պաշտօնական բացումը տնօդի ունեցաւ Փետրվ. 5-ին: Պատրիարքարանին կողմէն ներկայ զոնուեցան Հոգ. Տ. Տ. Կիւրեն եւ Ա. Թարգման Պարզեւ Վարդապետները:

Ն. Ս. ՕՇՈՒԽԹԻՒՆ ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՊՈՔԻՒՆԵԼՈՒ Վ. ՐՈՅ

Ցաւող լուած ըլլալով թէ Կիլիկիոյ Վ. Անափառ. **Տ. Յահակ Մրգազան Կարողիկոսը կրիբէ կը տառ ապի, Պատր. Տեղապահ Մրգազան ամբողջ Միարանութեան կողմէն մասնաւոր զիրով մը առողջութիւն մաղթեց եւ որպիսութիւնը հարցուց Ն. Ս. Օծութեան՝ որ Միարանութեան ալ երէց եւ բազմավաստակ անդամներէն եղած է Կիլիկիոյ Աթոռը բարձրանալին առաջ: Ամսոյն 13-ին, սակայն՝ ի մեծ ուրախութիւն՝ հաղորդուեցաւ Ս. Աթոռ. թէ Վեհափառը իր անհանգստութիւնը անցուցած եւ ապարինելու վրայ է Տեղապահ Մրգազանի կարգադրութեամբ ամսոյն 14-ին ՇԲ. օր, Ս. Յահակ Պարզեւ Հայրապետի սօնին առթիւ, Ս. Պատարագի պահուն պատշաճ ծանուցամբ զիրութիւն եւ աղօթք մատուցուեցան հոգեւորական դասուն եւ հաւատացիաներու կողմէ: Ն. Ս. Օծութեան արևշատութեան եւ բազուցութեան համար որպէսզի շարունակէ պահել այն կորուն ու արթնամութիւնը՝ որպէս շնորհիւ Տիար Կարեւան, ներկային կը կառավարէ իր հօտը «Քաջ Հովուին» նման, յառաջացեալ տարիի մէջ:**

Վ. Ա Խ Ձ Ա Ն Ո Ւ Մ

Գեր. Տ. ԳՐԻԳՈՐ ԱՐքիւսպ. ԳՈՎՐԻԿԵԱՆԻ

Գեր. Տ. Գրիգոր Արքեպոս. Գովրիկեանի, Վիեննայի Միթթարեան Միարանութեան Արքանոր մահուան առթիւ, Ս. Աթոռոյս Պատր. Տեղապահ Գեր. Մրգազան Հօր կողմէնէն ցաւակցական հնեազիքը ուղուեցաւ Վիեննայի Միթթարեան Միարանութեան: